



ՎԱՐՈՒՆՈՒՄ ԿՐԻՍՏՈՒԿՆԵՐԻՆ

Պուշկուրիայ համար
 12 ֆր.
 Վ. Գալստիայ
 6 " "
 Ա. Կաստիլիանի
 համար 8 ֆր.
 Վեգուսիայ
 8 " "
 Ա. Կաստիլիանի համար
 3 ֆր.
 Վեգուսիայ
 1.50 " "
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Պատուցման տարի
 շին երեսին համար 40 ս.
 վաղ վերջին երեսին համար
 20 սանթիմ. է. երեսին
 սակի սակավներու համար
 20 Օլո գեղջ կրչայ:

Վառեայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՈՒՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՈՒՆ ՍՐԵՐԸ

Վառեայի համար ձեռքի 10 սանթիմ

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

Վառեայի համար ձեռքի 10 սանթիմ

Վառեայի համար ձեռքի 10 սանթիմ

Վառեայի համար ձեռքի 10 սանթիմ
 15 ՍԱՆԹԻՄ

ՇԱՐՈՒՆԻ ԿՐԻՍՏՈՒԿՆԵՐԻՆ ԿՐԻՍՏՈՒԿՆԵՐԻՆ ԿՐԻՍՏՈՒԿՆԵՐԻՆ ԿՐԻՍՏՈՒԿՆԵՐԻՆ ԿՐԻՍՏՈՒԿՆԵՐԻՆ

ՆԱԽ ԶՏՈՒՄ

Մեր բոլոր կուսակցությունների մէջ գտնված անձնազոր, խելքը գլխին և կրակից ու սրից չբխալով գործիչները առաջին պարտականությունը պետք է լինի կուսակցությունները ազատել պոռտախոս, ոչ մի բրկան գործ չը կատարող և անազնի տարրերից:

Վերջապէս ժամանակ է յեղափոխական գործը կեդրոնացնել զուտ յեղափոխականների ձեռքում: Ժամանակ է յեղափոխական ներթափանցում օժանդակող մարմինների դերը և տեղը որոշել, ու թոյլ չը տալ որ ամեն մի թուլամորթ տիպ յեղափոխական բարձր և պատկանելի անունը քարշ տայ սրահներում, փողոցներում և կաֆէներում:

Մեր տաններու տարվան գործնական յեղափոխական կեանքը, կարծում ենք, բաւական է մեզ համոզելու թէ՛ մեր ամենամեծ պակասությունը այն է եղել, որ մենք դեռ չենք կարողացել զուտ յեղափոխական կազմակերպություն ստեղծել, և դրա միակ պատճառը այն է, որ մեր յեղափոխական գործը մեծ մասամբ վարել են ոչ յեղափոխական մարդիկ, թէև ամենամեծ յեղափոխականների փողոցներ կրողներ են եղել այդ վարիչները:

Անխառն յեղափոխական մարմին ստեղծելուց յետոյ է որ, մեր յեղափոխական կուսակցությունները արժանի կը դառնան իրենց անունին, յարգանք ձեռք կը բերեն բուն երկրի մէջ և կը համարենք բոլոր այն հայերին, որոնք միշտ պատրաստ են Ռուսիկոնը անցնել իրենց հայրենիքը որ առաջ փրկելու համար:

Եւ հաւատացե՛ք որ այդ ժամանակ հայ յեղափոխականների միացման գործը շատ դիւրին պէտք է լինի, որովհետեւ միացողները պէտք է լինեն նրանք, ովքեր ճակատ առ ճակատ թուրքի դիմաց են գուրս գալու, ոչ ճա-

ռելու, այլ վերք տալ և վերք առնելու, մահ տալ և մահ ստանալու որոշումով:

Եթէ մեր յեղափոխական մարմինները ընդունակ լինեն այս անհրաժեշտ վիրաբուժական գործողությունը կատարելու, մենք հարիւրից հարիւր հաւատացած ենք որ շատ շուտով հայկական յեղափոխական գործը մեծ ծաւալ կստանայ և շատ հաստատուն հիմքեր վրա կը դրվի, Իսկ եթէ ոչ, ինչ պալիտա միջոց էլ որ գործ դենն, ինչքան էլ որ երգեն, ճառեն, սանթիմներ հաւաքեն, միտ կողմից էլ ստուպի նման Անդրանիկներ, Սերովներ և Սէրբեմեաններ երեւան գան, այնուամենայնիւ մեր յեղափոխական գործը կազնի կազը պէտք է ընթանայ, եռանդին պէտք է յաջողոգէ մեռելու թիւնը և այդպէս պարբերաբար:

ՎԱՐՆՈ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ընթերցողները չեն մոռցեր անշուշտ թէ ինչպէս Սուլթան անցեալները ուզեց արգելք ըլլալ երկտասարդ թուրքերու Բարիկի համաժողովին, և բարեբաղ դարար, շնորհիւ ազգեցիկ Ֆրանսացիներուն, բան մը չը կը ցաւ ընել, ու բարկութեանէն կատրած երոպայի թուրք ուսանողներուն հրամայեց հայրենիք վերադառնալ: Սուլթանի ատ հրամանն ալ ի հարկէ շատ թուրք ուսանողներու համար սանթիմի մը արժէքը չունեցաւ:

Այս օրերս Համիտ, սա կարմիր փատիլահը ուզեց արգիլել հայ ուսանողներու համաժողովը, իր որչէն հրամաններ արձակեց Բարիկի գեուպանին և ժընէի գեր հիւպատոսին միջոցներ ձեռք առնել արգիլելու հայ ուսանողություն համաժողովը:

Ինչ մտածեց արգեօր խալիֆը այդ հրամանները արձակած միջոցին, թերեւս խաբբայութիւն, որովհետեւ ինքն ալ հա-

մոզուած էր թէ իր հրամանները չը պիտի կատարուին, բայց բաւ է որ հպատակ ախմար ամբար իմանայ թէ խալիֆը այդպիսի հրամաններ կարձակէ նաեւ եւրոպական պետություններուն:

Այդ հրամաններ արձակելը Պոլսոյ մէջ չի իրագործուիր սակայն անոնց չը կատարուիլը, մուլթանին ծաղր ու ծանակ դառնալը կը թագցնուի:

Ու ամբար միշտ կը կարծէ որ կարմիր Համիտը աշխարհ տէրն է: Եւ եւր այդ ամբար օր մը հասկնայ թէ Համիտ որչափ ծագրելի և որչափ արհամարիլ դարձուցած է թուրք պետական վարչութիւնը: պիտի սթափուի, սակայն ե՞րբ, թերեւս երբէք:

Թրանսվալի մէջ պատերազմը կը շարունակուի, առժամեայ կառավարութեան անդամները գեռ հաղիւ գտան ճիւղերը և ճուէտը, ու կը խորհրդակցին:

Եւրոպական թերթերու մէկ մասը կը հաղորդէ թէ Թրանսվալի զօրավարներու և քաղաքական մեծաւորներու մէջ անհամաձայնութիւն կայ հաշտութիւն կայացնելու մասին: Մէկ մասը կուզէ ոչ մէկ զիջում չընել Անգլիոյ, միւսը կուզէ:

Ուրիշ թերթեր ալ կը յայտնեն որ Շալք—Պիւրկէրի և ընկերներուն Գիշների դիմելու մէջ պօէրական խորամանկութիւն մը թագցում է, և հաւանական է որ Պօէրները անդիւրացիներու և ամբողջ աշխարհի համար նոր անկնկալ մը կը պատրաստեն:

ԿԵՏ

ԵՐՈՊՈՍԻ ՈՒՍԱՆՈՂ ՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԷՆ

Ժնեւիւս Թրիպլիս» քերթը նեհեւաշր կը գրէ Ռուսոն զակաւ Միտրեան հաւազոււնարի մասին:

«Հայ դրոշակը որ շատ քիչ անգամ պարզուած է ժնեւի մէջ, երեկ Ալպեաններու հիւրանոցին պատահաններու մէջ կը ծածանէր Եւրոպայի

Հայ Ռուսանոցներու հինգերորդ համաժողովին առթիւ, որուն կոմիթէն անցեալները պ. ար Բրէսանէն ժնէ հրաւիրեց, պ. Գիտաը պատուիրակ զրկեց Մոնաքոյի խաղաղութեան համաժողովին, Բէրնի, Եյնի միջոցաւ Պէրլինի մէջ, իսկ Հոսթի և Պրիւքսէլի մէջ, Եւրիշ ակնաւոր հոտորներու միջոցաւ Թօնֆէրաններ պիտի սարքէ:

Համաժողովին ընդարձակ դահլիճը զարգարուած էր կանաչով և այլաբանական ու խորհրդաւոր նկարներով, մտաւորապէս հարիւր հրաւիրեալ հայեր կային ուրիշ տեղերէ և ժնէ ապրողներէն:

Չս պաշտօնական պատուիրակներ ներկայ էին Պերլինի, Մօնթէլէի, Բարիզի, Լիոնի, Միւնխէնի, Դարմաշաղի, Քարլսրուհէի, Թիւպինգենի, Միլթիլդայի, Պրիւքսէլի, Լիէժի, Միւրիխի, Լոզանի և ժնէի համալսարաններէն, իսկ այսօր կապառուին Անգլիոյ և Իտալիոյ պատուիրակները:

Դահլիճը մասնաւոր շեշտ մը կրող տեսք ունէր, կանանց զուարթ արդու զարդի հանդէպ սյուրբը ամբողջովին սեւ հագած էին, և քանի որ այս պարտները ամենքն ալ իրարու կը նմանին ու ամենուն ալ դէմքերը միշտ խիտ, գրեթէ տխուր են, ատոր համար դահլիճը քիչ մը սգաւոր երեւոյթ ունէր, Բարեբախտաբար ուսանողուհիներու զուարթութիւնը երեկոյ թիւ քիչ մը ուրախ շեշտ տուաւ, եթէ ոչ, առանց անոնց, երեկոյ թը սուգի նախաերեկոյին պիտի նմանէր: Մեծ պատի երեքշաբթի օրուս մը համար, երբ վարը, փողոցէն զուարթ խումբերու զոյգեր երգելով դաշտերէն կը վերադառնային, հակասութիւնը շատ աչքի զարկաւ:

Ժողովը բացուեցաւ հայերու ազգային օրհներգով, յետոյ պ. Ռալֆատուր Մալուսեան հայերէն լեզուով բարի գալուստ մաղթեց հիւրերուն, մասնաւորապէս օտար քաղաքներէ և կամ ուսանողներուն ու վերջեց անցած տարւան մէջ պատահած երկու կարեւոր դէպքեր, մին Հայր Ալիշանի մահը, միւսը հայ և մակեդոնացի յեղափոխականներուն Ատրիանուպոլսոյ մէջ կախալան բարձրացուիլը: Ժողովը ոտքի կայնեցաւ այդ եռանդուն կողողներուն յիշատակը յարգելու համար:

Պ. Մ. Յովհաննէսեան Ֆրանսերէն բարի դալուստ մաղթեց բոլոր հրաւիրեալներուն, զովեց Զուլեյքիոյ եւ ժնէի հիւրասիրութիւնը, հաստատելով որ Հայերը Զուլեյքիոյ դրօշակին տակ կրնան ազատօրէն անձնատուր ըլլալ իրենց ուսուսին և, միև-

նոյն ժամանակ լրենց դժբաղդ հայ-
րենիքովը գրադիր :

Հայ ուսանողները իրաւունք ու-
նին իրենց հայրենիքի վիճակովը ըզ-
րադիր եւ ջանալ անոր համար լաւ ա-
պագայ մը պատրաստել : Այս նպա-
տակով է որ անոնք Եւրոպայի մէջ
հրատարակութիւններ կը ընեն եւ քան-
ֆէրանսներ կը սարքեն :

Ճառախօսը մասնաւորապէս ողջու-
նեց Զիւրկայ, մակեդոնացիները, ո-
րոնք Հայերու հետ ընդհանուր շահեր
ունին :

Համագործակցութիւնը Եւրոպայի
գերմաններէն բացառուելով իրեն հա-
մար քիչ նշանակութիւն ունի հայ դը-
րօսակը : Կարմիր, ճերմակ, կանաչ,
երկու սեւ կապերով եւ վեց աստղե-
րով որոնք այդ դժբաղդ եւ պահու-
երկրին նահանգները կը ցուցնեն :
Կարմիրը թափուած արիւնը կը նշանա-
կէ, ճերմակը ձգտումները սրբու-
թիւնը, կանաչը յոյսը, իսկ սեւ կա-
պերը հայերու սուղը ճնշուած հայ-
րենիքի մասին :

Պ. Լուի Ուտրին, Ժընէի համալ-
սարանի բրոֆէսորը անձնապէս իր
կողմէն խօսելով, ջերմ համակրանք
յայտնեց երիտասարդ հայերուն, մաս-
նաւորապէս գովեց իր աշակերտնե-
րուն ետանդը եւ աշխատասիրութիւ-
նը : Եւ հաստատեց հակասութիւնը
որ գոյութիւն ունի աշխարհի պետու-
թեանց թուրքութեան եւ հայ գաղտնի
արդարութեան միջեւ, հայերու օգ-
նութեան հասնելու համար :

Մակեդոնացի Բասէֆ Մակեդո-
նացիներու խմբին կողմէ խօսեցաւ
Մակեդոնացիներու եւ Հայերու հա-
մարտակցութեան մասին եւ կարգաց
Պորիս Սարաֆովի մակեդոնական
յեղափոխական գործադիր կոմիթէի
նախագահին նամակը, որով Հայերը
կը հրաւիրէր միասին գործելու եւ
կը յուսար որ օր մը ոչ թէ դահլիճի
մէջ, այլ ուրիշ տեղ իրարու պիտի
հանդիպին :

Յետոյ Գալաթի կարգաց
Չուրջեֆի պատակաւ խորհրդի ան-
դամ Պ. Ֆալօնի համակրանքով ի
նամակը որով ան իր ցաւը կը յայտ-
նէր բացման հանդէսին մասնակցի

չր կարենալուն համար, որովհե-
տեւ դաշնակցական խորհրդէն Պէն
կանչուած էր :

Պ. Քիւտ Օբրո Արմէնիայի խմբա-
գիրը համաժողովին ջերմ համակրու-
թեամբ իր հետագիր մը ուղղած էր :

Նիստի պիւրօն ընտրելէ յետոյ, ան
միջապէս համաժողովը գործի սկսաւ :
Պարոն Սաչատուր Մալումեան հայե-
բէն լեզուով խօսեցաւ Միութեան
վերջին տարուան գործունէութեան
մասին : Քանի մը մանրամասնու-
թիւններ սուաւ այն հրատարակու-
թեան մասին, որուն պիտի աշխա-
տակցին աշխարհի ամենականաւոր
հրապարակաւորներէն, փիլիսոփո-
ներէն, գիտնականներէն եւ պետա-
կան մարդերէն : Էրեւնի Նաւիլ առ-
ժամայ կոմիթէին նամակով մը ան-
կեղծ համակրութիւնը յայտնած է
ափսոսալով որ իրեն զառամեալ տա-
րիքը թոյլ չեն տար աւելի արդիւ-
նաւէտ կերպով աշխատակցիլ այդ
գեղեցիկ գործին :

Այս առաջին նիստը կէս գիշերին
վերջացաւ :

Համաժողովը սիթ օր պիտի սեւէ-
օրը երկու անգամ : Մասնաւոր պատ-
ճառներով ի նիստերը հանրութեան մաս-
չելի չը պիտի ըլլան :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Թաղական խորհրդս ներկայիս իւր
քսան եւ վեցասնեայ գործառնութեանց
հաշիւները ներկայացնելով քաղաքիս
հայ հասարակութեան, հարկ կը հա-
մարէ նաեւ մի քանի բացատրու-
թիւններ կցել անոնց :

1899 դեկտեմբեր 1 թուականին
պաշտօնի ձեռնարկելով Թաղական
խորհրդս իր նախորդներէն ընդու-
նեց 2941,90 Քրանք, նոյնպէս նա-
խորդ հոգաբարձութեան թողած
4131,55 Քրանք պարտքերը :

Արդ՝ 1899 զեկտ. 1 էն մինչ 1902
փետրվար 28 Թաղական խորհրդս
ունեցաւ 19,553,20 Քրանքի զուտ
հատոյթ մը, որմէ նախորդ Թաղակա-

նութեան 2841,90 Քրանք եւ նախորդ
հոգաբարձութեան 4131,55 Քրանքի
պարտքերը վճարելով, մնացելը յատ-
կացուց քաղաքիս Ազգ. վարժարանաց
տարեկան պիւտճէն լրացնելու : Ինչ-
պէս մանրամասնօրէն յայտնի կերե-
նայ ներքակ հաշուեկշիռէ միտնգա-
մայն հոգալով եկեղեցւոյ ընթացիկ
ծախքերը, վճարելով պաշտօնէից ամ-
սաթոշակները, նաեւ ամեն կերպ
հոգ տանելով եկեղեցւոյն պայծառու-
թեան : Եւ այսօր Թաղական խորհրդս
ուրախութեամբ կը յայտարարէ թէ՛
ազատուած այդ տոկոսաւոր պարտքի
կաշկանդումներէն յառաջիկային պատ-
հասարակութեան օժանդակութեամբ՝
ազգային նիւթական վիճակը հաստա-
տուն աղբիւրներու վրայ հիմնուած ա-
մէն կարելիութիւն ունի :

Սորհուրդս պարտ կզգայ իւր ան-
կեղծ շնորհակալութիւնը յայտնել քա-
ղաքիս պատ. հայ հասարակութեան,
որ առաջին օրէն ջերմ համակրու-
թեամբ ողջունեց զինքը, միշտ նուի-
րելով իւր նիւթական ու բարոյական
աջակցութիւնը, առանց որուն կարելի
պիտի չըլլար մեզ ու եւ յաջողութիւն
ձեռք բերել :

Սորհուրդս վստահ է որ, պատ. հա-
սարակութիւնը նոյն եռանդով ու
նայն յարատեւութեամբ պիտի փու-
թայ իւր աջակցութիւնը խորհրդոյս
ապագայ ծրագրիներու իրագործման,
երբ սզգային նիւթական վիճակը ա-
մուր հիմերու վրայ քննու ամեն
գիւրութիւն ու յարմարութիւններ
կը գտնուին :

Այս առթիւ Սորհուրդս հարկ կը
համարէ նաեւ գիտել տալ թէ՛ անձ-
նական հաշիւներէ կամ շահամուկ կը-
քերէ գրգռել իր դէմ ուղղուած բոլոր
յարձակումները ու սին նախատեսու-
ները երբէք չեն կրնար ու եւ ներ-
գործութիւն ունենայ իւր վրայ, որ
գիտէ անխուղ ու հաստատակամ շա-
րունակել իւր առաջադրած գործը
մինչև իւր պիտանքը, միայն ցաւ կը
զգայ որ այդ կարգի յարձակումները
պատ. հասարակութեան մէկ մասին
միտքը պղտորելու ծառայելով, ար-
գիւք կըլլան անոր իր օժանդակու-
թիւնը նուիրելու, որով Սորհուրդոյս

ջանքերը դժուարութեանց կը բաղխին
եւ սակէ մի միայն Ազգը կըլլայ սուտու-
ղը :

Ի դիմաց Թաղ. Սորհուրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Մարգիս Գաբրիէլեան Յ. Թոյնխանեան
Վառնա 26 մարտ 1902

Հաշուեցուցակը յաջողաբ համարի մէջ
կը հրատարակենք : Ուրիշ ենք որ
Վառնայի թաղ. խորհրդը սկիզբը կը
դնէ հրապարակային հաշուետու-
թեան : Կը փափաքենք որ Պուլկարից
միւս քաղաքներու հայ թաղականու-
թիւններն ալ այս սիրուն եւ օգտա-
կար օրինակին հետեւին :

Դ Ժ Գ Ո Յ Ը

Է.

— Այո, շատ են մեղքերս շատ,
ու քսանիւրի. մանաւանդ Վարդօի
հարգէպ : Օր մը գիտէ՞ք ինչ մտածե-
ցի, երբ տեսայ որ 28 նոտուկի
խնդրով ալ Վարդօն չը կրցի միտնել
թէ եւ ես ինքս առաջին անգամ յայ-
տարարած էի թէ՛ Վարդօն այդ խնդ-
րին մէջ ոչ մէկ կապ ունի : Ըսեմ մի
խոստովանիմ :

Այո, պիտի խոստովանիմ, որովհե-
տեւ մեծ պաք է : Մասնեցի Վարդօն
կամ սպաննել եւ կամ մահու չափ ծե-
ծել տալ : Սակայն մարդ մը չը կրցի
գտնել որ յանդգնէր անոր վրայ ձեռք
բարձրացնել. ումնք վախտելով, ու-
մանք ալ յարգելով չը համաձայնեցան
այդ իմ դժոխային ծրագիրս իրագոր-
ծել :

Ես ալ որոշեցի իմ թքածներս լղձ
ու զայն հին Հնչակեան միամիտ գիւ-
ղացիներու քով եւ ըսի՛ք. ո ծնէ Հն-
չակեան եմ :

Այդ քայլով երկու նպատակի կու-
զի հասնիլ. մէկ, Հնչակեաններու
ուրեցած գրամները ձեռքերէն առնել,
մէկ ալ Վարդօն սպաննել կամ ձեռն
տալ :

Սիրայծփար ընդունեւելէս վերջ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Ա Ն Ճ Ա Ս Վ Ա Ն Ա Ն Ի Ն

Մ Ա Ս Ո Ւ

Փ Ղ Ո Ւ Խ Է.

Մութը, սեւ չարագուշակ մութը
պատել էր վան քաղաքին : Վահէն,
Զարուհին, Նազլուն եւ երկու ուրիշ
վանցի երիտասարդներ հաւաքվել
էին մի համեստ սենեակում եւ կա-
մացուկ խորհրդածում էին : Իսկ նա-
նէն խոհանոցում կերակուր էր պատ-
րաստում :

Վահէն իր ընկերներին բացատ-
րում էր .

— Հաւանակում է որ այսօր գան
մեր տունը խորհարկելու. մասնաված
ենք : Անձնապառ լինել անկարելի է.
պէտք է գիմադրել. պէտք է կեան-
քը թանկ ծախել : Եթէ ողջ ողջ թշ-
նամու ձեռք ընկնենք, միեւնոյն է,
ազատում չը պէտք է լինի :

— Իայնչ մեր գիմադրելով կարելի
է կոտորակի տեղի տանք, միջամը-

տեց ընկերներից մին :

— Ընդհակառակը մեր գիմադրելով,
կառավարութիւնը պէտք է կարծէ,
որ մենք ա ելի մեծ ուժ ունենք Վա-
նի մէջ, եւ իսկոյն կոտորածի չի դի-
մի : Եւ վերջապէս այդ տեսակ են-
թադրութիւնների պատճառով յե-
ղափոխականը զինաթափ չը պէտք է
լինի :

— Եթէ յաջողէր, փախելիք աւելի
լաւ կըլլար, միջամտեց երկրորդ ե-
րիտասարդը :

— Այո, եթէ յաջողէր. բայց հիմա
մենք դուրս գալու պէս կրկին փո-
ղոցում ընդհարում պէտք է ունենանք.
ուրիմի կրկին, եթէ մեր կուեւելով
կոտորած կարող է լինել, կոտորա-
ծից վանը չը պէտք է ազատվի :

Հրացանները լցնենք, փամփուշտի
պաշար վերցնենք եւ բարձրանանք
տանիքի վրա. որովհետեւ եթէ այս
տեղ փակվենք, մենք ոչ մի թուրք
չենք կարողանալ սպանել : Տանիքից
մենք կարող ենք ազատօրէն հրացան
արձակել : Տան մօտ մարդ չը թող-
նենք. եթէ մօտեան կարող են եւ
տունը հրդեհել :

— Մենք էլ կը գանք. միջամտեց
Զարուհին իր եւ Նազլուի փոխարէն :

— Ես ալ կուգամ, յանկարծ դուռը
բաց անելով ստեց նանէն :

— Այո, ամենքս էլ տանիքի վրա
կը բարձրանանք՝ ինչ ուղում է թող
լինի : Եթէ մեր գործը յաջող գնաց,
այն ժամանակ մենք տանիքից կիջ-
նենք եւ կերթանք Սարգիսի տունը.
Ես արդէն նրան պատրաստել եմ,
մեր յետքը կը կորցնենք. կառավա-
րութիւնը կը կարծի որ մենք քա-
ղաքից փախել ենք : Եւ վաղը, եթէ
տրամադրութիւնը ունենայ կոտո-
րած սարքելու, մենք աւելի մեծ
խմբով դուրս կը գանք մէջ տեղ :
Ուրիշ տներ էլ կան պատրաստված,
մենք շարունակ պէտք է քաղաքի մէջ
մնանք, միշտ նոր նոր տեղերում ե-
րևան գալով որով եւ կառավարու-
թիւնը կը համոզենք Վանում մեծ
ուժ լինելու մէջ, Դէ նանէ, հիմա
մի քիչ հաց բեր ուտելը. որովհետեւ
յայտնի չէ թէ դու քանի ժամ առանց
կերակրի կը մնանք. իսկ անօթի
մարդը չուտով ուժասպառ կը լինի :

Նանէն ու Նազլուն շապով գնա-
ցին հաց բերելու : Երիտասարդները
եւ Վահէն սկսեցին փամփուշտները
կրծքերին իաջաձեւ կապել : Զարու-
հին էլ իր ստորձանակը վերցրեց եւ

մի քսան հատի չափ էլ գնդակ զը-
պանը գրից :

Վերջապէս հացը քերվեց. սուսու
փուս, արագաբար ընթրիք արին եւ
ամենքն էլ տանիքի վրա բարձրացան
ու պարկեցին երկրորդ մօտ :

Վահէն շարունակ փողոցի մէջ էր
նայում, աշխատում էր թափանցել
մութի մէջ. բայց իր ջանքերը զուր
էին. մութը անթափանցելի էր.
ձայն, չըուկ չէր լսվում. Երբեմն ալ
եւ այն անկեւեցի չնկրի ունոց կ'
լսվում եւ այդ սեւ ու մութը աւելի
չարագուշակ դարձնում :

Յանկարծ Վահէն ոտքերի ձայն
լսեց, թէ եւ կամաց : ձայները տան
երէք կողմերից էլ եկան :

Նա սողալով մօտեցաւ ընկերներին
եւ շնչալով ստեց — զգուշ եւ անվախ
եղէք. տունը պաշարեցին : Վահէն
հազու իր տեղն էր վերադարձել, երբ
սկսեցին դուռը բախել, Գոսն բա-
խումը հետզհետէ սաստկացաւ. բաց
անող չկար :

Յանկարծ լսվեց հրամանը :

— Կոտորեցէք :
Վահէն հրացանը ուղղեց եւ կրկին
սողալով ընկերներին ստեց, դուռը
կոտորվեց թէ չէ. իսկոյն դոսն ուղ-

Երկրորդ ժողովին մէջ անախարհեցի վարդուն օւժաժամի ընել մեզի չք թանգարեալու համար և այդ կրնայ միայն ձեռնարկ և կամ մեղացնելով և քննարկող գաղտնի և համոզեցի :

Բայց անոնցմէ մին հարցուց .
— Եթէ ստիկաններ զմեզ բռնեն , ինչ պատասխանենք :

— Եթէ ՌժՌՈՒՄ մը գրէք գրքանիկ և ձերբակալուելուդ պէս հանեցէք և ըսէք՝ ա՛յն այս թերթով մեզի դէմ գրած է :

Երկրորդ բառ .
— Բայց վարդուն ատրճանակով կը պտտի-ան մեզի կը վարեն :

— Հոգ չէ՛ պատասխանեցի ես , նախապէս ալ թե՛ ինչ զարկէք :

— Բայց վարդուն երկու ատրճանակ կը կրէ , ձախով ալ կրնայ զարնել միջամտեց երրորդ :

Վերջապէս շատ մը տանջուելէ վերջ հազիւ կրցի համոզել , խորհուրդ տալով որ անհավուտի հագուստներ հագնին , որպէսզի օտարականներ կարծեն թէ Մակեդոնացիներ են զարկողներ և տէր չըլլան :

Ու երեկոյ մը մեր տղայք գացին մոթ ժամանակ վարդօի ճամբան պահելու , իրեն տան քովերը , որ բաւական հեռու կը գտնուէր և ամայի փողոցի մը վրայ : Բայց երբ տունէն կիմանան թէ վարդօ տուն չէ , իրենց անհավուտի զգեստներով սարսափ կը տարածեն տիկնոջ վրայ-և կրսեն-երբ վարդօ գայ-ըսէք թէ մեզի պէս երեք մարդ եկան զինք փնտռելու :

Անոնք մտածեր են թէ՛ Տիկին վախճանով այդ ստակալի մարդոցմէ-ալ իր ամուսնուն չը պիտի թողու խառնուել ազգային դործերու :

Այո , ես հերոսս , թուրքէն ալ վատ եղայ և երեք մարդ զրկիցի եթէ ոչ վարդօին վրայ սարսափ տարածել գոնէ իւր կին վախցնելու :

Բայց այդ չեն միայն իմ մեղքերս , ո՛վ վարագայ Սուրբ Սոյ :

Ես հերոսս այնչափ ստորցայ , որ սկայն հիպոկրիզայի կեղծուած թուրք թեր ձախելու և երբ-զիս բռնեցին ըսի թէ չը հաւ կրայ :

Օր մըն ալ ես հերոսս միացայ ուրիշ չէր ինքեղու-հետ և ստորագրեցի կա-

ռավարութեան տարիք բողոքագիր մը , որով կուզէինք հայ գաղթականներու արդիւն ալ փողոցներուն մէջ ծխախոտ վաճառել :

Այս անգամ ալ բռնուեցայ և յայտարարեցի թէ՛ չեմ հասկցած թէ ի՞նչ բողոքագիր էր :

Չէ՛ , մեղքերս շատ են , շատ անհասկանալի :

Այսօր խոսեցայ որ քանի մը բնկարգներ սարած են վարդօի որուն մէջ ես գրած եմ , իսկ գանձապահի սեղ ալ ստոր գրած է Հնչակաւանութեան դատաւանդը և անոնց ստակները իմ ճանկերուս մէջ նետող պզտիկ ապուշ մը :

Ու գործանալի բան , ինչ որ ալ ընեն «ԵՍՏՈՒՄ»-ի խմբագրութիւնը կիմանայ :

Չուր սեղ չէր որ մեր վարագայ սուտ բարեպաշտ վարդապետներ ու եպիսկոպոսներ կըսէին չչիք ինչ ծածուկ ոչ յայտնեցի :

Չէ տղար , ես վաղ պիտի անցնիմ ազգային գործերէ : Ինձի պէս ստոր ապուշներու դար անցած է : Ալ ժամանակ է մեղքիս քաւելու : Գրեմ խայրիկին իմիս համար աղօթք ընէ իջմիածնայ Մայր Տաճարին մէջ : Հիմայ սկսիմ աղթել :

Ու հոչակաւոր խաչագորդ , որ այսչափ տարինքէ ի վեր խաբարայութեամբ , ստորութեամբ և յանդուգն փառասիրութեան տեսչերով սարած էր-չոքեցաւ և կտաւ աղթել-անկապ կերպով :

Տե՛ր քոյ զմեզս իմ , մի դարձուցաներ զեղեւս քո յիսկին :

«Հաւատով յաւատովսնիս» և երկիրպազանելի քո և այն :

Բայց յանկարծ վեր ցատկեցաւ... պտալով :

— Չէ , չէ նախագահ պիտի ըլլամ անպատճառ . կամ աղքատախնամին , կամ միութեանականներու . մինչև օր մը , ժամ մը նախագահ , տանադպիր , ատենագետ և քարտուղար չըլլամ , չը պիտի մեռնիմ :

Իմ առաջին խօսքս» եղած է ոչ փորձեալ , ոչ բանթօք , ոչ լեմոնով ջուր և ոչ մէկ բան , այլ նախագահութիւն և նախագահութիւն : կեցցե՛ս զատրիքս . . .

Ս .

ձախել : Մերն էլ այնչափ արժան չէ որ կիսավարձերի գնդակներին զոհ տանք , Լուսանալուց յետոյ թշնամութիւն էլ կիմանանք և աւելի դիւրութեամբ կարող ենք վերջացնել այդ անպիտանների հետ : Հիմա պատերը լաւ չըլլապատեցէք . մի երկու զինուոր էլ պահպան գրէք ետեւի փողոցում . որովհետեւ կարող են տանիքների վրայից անցնել և այն փողոցով փախչել :

Վահէն լսեց հրամանատարի պատուէրները և չչէջալով ընկերների ասաց :

— Այս լաւ եղաւ , մենք քաջներք զէպի ետեւը , Կալօնց սանիքի ուղղութեամբ . սրանք մինչև օրս մեզ հանգիստ պէտք է թողնեն : Ան այժմ չը շարժվենք և փախչելու փորձ անենք . որովհետեւ հիմա դեռ այնքան ուշ չէ . լուռ կը հսկեն : Բայց լոյսը ծագելուն պէս փախչենք , և տեւի փողոցը պահող զինուորները քրեանցած կը լինեն անշուշտ : Եթէ քրեանց չը լինին , Կալօնց պարտէզը կիջնենք , նրանց դուռը կը բանանք և կիրթանք Սարգսէնց : Չարուհի , նազլու , նանէ , դուք միշտ երեքիս մէջտեղ գտնուեցէք , ինչ էլ որ պա-

Հ Ա Ն Դ Ե Ս Ն Ե Ր
— օ —

Գեղունիւի երրորդ պրակը զարգարուած է Հոչակաւոր Այվազովսքիի երկու կարեւոր նըկարներու պատճէններով . սօք . Սէրվիչիին , Ռուսահայ բանաստեղծ Ա . Մատուրեանի և սօք . Փոփովիչի պատկերներով . Կենսագրական տեղեկութիւններով միասին , կան և ուրիշ նկարներ , ինչպէս և Գաւառ-Քաթիպայի մահարձանը :

Ու շագրաւ է Երզնէ Եհաննազարին նամակը , որով նամակագիրը մեղմութեամբ , բայց բաւական ազգու ոճով փափաքներ յայտնելով մատնանիչ կրնէ «Արտէստէմիս» հոգեւոր պահապանութիւնները :

Յուսով ենք որ «Արտէմիս»-ի խմբագրութիւնը այս բարեացակամ նկատուութիւնները աչքի առջեւ ունենալով , պիտի ճիգեր թափէ մեր կանանց ամահանդէսը փափագելի բարձրութիւնը վրայ պահել :

— Երբ Բանասէրին երրորդ պրակը կարեւոր խմբագրական մը անի կիրիկիս , կոթողիկոսութեան հրաժարուց Երէցեանի մասին , Ոյգ եպիսկոպոսին հրաժարումը լուրջ պատճառներէ զուրկ կը գտնայ և հայ մողովրդին , Երոսպէտի պատրիարքին ու կոթողիկոսին հրաւեր կը կարգայ այդ ոչ պարտաճանաչ եպիսկոպոսը բարոյապէս պատմել :

Մատիւրաւացի պահանջ մը :
— «Բաղամալէպոսի չորրորդ պրակի մէջ աչքի կը զարնէ հայր Երեմեանին «Մի վճատիք» կորովի , խիղախ , և մեր կեանքին ազտու երեւոյթներուն դէմ անխնայ կը ռիւ մղելու հրաւերով բռնկած

տահի չը վախճալ . քանի մենք ողջ ենք ձեզ ոչ ինչ չի լինի , Հիմա դուք մի քիչ հանգստացէք :

— Աւելի լաւ անաշարիկութիւն ունեմ . ասեց նազլուն , քանի որ կարօնց պարտէզը պէտք է իջնենք , մեր տունը ալ մեզի պէտքը չը պիտի գայ . թող ձեզնէ մէկը իջնայ մեր տուրքի մէջը գաղ լցնէ և կրակ սայ . կրակը տալուն պէս մենք կամայ կամայ դէպի կարօնց կողմ կերթանք և պարտէզ կիջնենք : Չօք տան հրգեմ անհնելով պիտի չուարի . աղմուկ պիտի լինա . մենք այդ միջոցին կարօնց տնէն դուրս կելնենք և ողոր մողոր ճամբաներով կը հասնենք Սարգսէնց :

— Հրաչայի է , ասաց Վահէն , ևս կիջնեմ . ետ առանց ժամանակ կորցնելու գատուր աէս սկսեց պատից վար սողալ , Մ/ւաները լուռ ու մուշկ հրացանները ուղղեցին դէպի բակը որ զինուոր չը մտնի ներս :

Չարուհին հոգեկան տագնապի մէջ էր . Վահէի արած քայլը շատ վտանգաւոր էր . նա կարող էր զինուորների ձեռքը ընկնել , Բայց մի քանի րոպէից յետոյ Վահէն վերագարձաւ յայտարարելով

խմբագրականը . Ոյգ հրաւերին հնա միասին յոգուածաղիբը վեր կը շարնէ մեր ներկայ կեանքին լուսաւոր կողմերը , յառաջադիմութեան , անկուտութեան նշանները , որոնք արդիւնք կը համարէ ձաղկոց , խտրականուց մտմալի գոյութեան :

Կը շնորհաւորենք Բաղամալէպի խմբագրութիւնը նոր ժամանակի պահանջներուն յարմար ուղիին մէջ անսայթաք կերպով «տաջ երթալուն» համար կուրսիւնանք որ հայ կրօնաւորներու այդ մենաստանէն , ժողովրդին ցաւերուն արձագանքող կորովի ձայներ կը լսուին :

Երբ պիտի Արարատի ծոցին մէջ թխմուած կուսկրօններն ալ սկսին այդ լեզուով խօսելու մեր ժողովրդին հետ . . .

Ո Ձ Դ

Թէեւ Տօպրիչը Պուլկարիս պզտիկ քաղաքներէն մէկն է , ուր նկարչութեամբ և լուսանկարչութեամբ կը պարսպիմ , չը նայելով որ գրանուած շրջանակ ալ շատ յարմար չէ մեծ յատկութիւններ , բայց միշտ աշխատած եմ յետադու լլլալ արուեստի գիտական և արուեստական ամենալիցիւն կատարելագործու . թեանց քայլ առ քայլ հետեւել . այսօր ունիմ արուեստին ամենալիցիւն կատարելութեամբ օժտուած դործիքներ , որոնց հետ միասին շնորհիւ նսեւ նկարչութեան արուեստիս , այսօր կարող եմ արտադրել ակունքիս ամենալիցիւն ամենալիցիւն արուեստական պատկերներ . որոնք մասնաւոր կերպով մշակած եմ և սրուն մէջ նըկարչութիւնը մեծ դեր ունի ,

Ասկայ փորձելը դժուար չէ . կըրնաք ձեր մէկ լուսանկարը զրկել իմ հասցէիս և պիտի ստանաք մեծաղիբը , օրինակին ճիշդ նման , միայն 15 Քրանքի փոխարէն . այն ալ ստա

— Ազատված ենք , տունը շուտով կը բռնկի . դէ , շարժվենք դէպի առաջ :

Ամենքն էլ սկսեցին կամաց կամաց դէպի կարօնց տանիքի կողմ սողալ : Երբ հասան , կրկին Վահէն ամենից անաջ այդ պարտէզը իջաւ . իջեցրեց նազլուն , Չարուհուն , միւս ընկերների օգիտութեամբ : Վասնէն երբ պատրաստվում էր իջնել , իրենց տան կողմից աղմուկ բարձրացաւ .

— Ետեւ կը վար :
Նանէն մի խոր հառաչանք արձակեց և շտապեց իջնել :

Մեր բարեկամները կարօնց պարտէզի դուռ բացին և ազատուար ճամբայ ընկան դէպի Սարգսի տունը : Նանէի կեսարից միացած օճախը կրակուր րոպէ մէջ էր . նա զոսվում էր իր տիրուհիների փրկութեան համար :

(Շարունակելի)

նախ եւ հաւանել վերջը վճարելու պայմանաւ:

Իսկ անոնք որ կամի վրայ իւղաներկ բնական գոյներով պատկերներ կուզեն ունենալ, պէտք է ընդհանուր գաղափար մը տան նոյն անձին գոյներն նկատմամբ: (Երեսի բնդհանուր գոյնը, աչքերու եւ մազի գոյնը) բնական մեծութեամբ 35 ֆրանք արժող: Կրկին վերոյիշեալ պայմաններով:

Թէեւ շատ տեղեր ակունտիսման պատկերներ կը ստորաստեն, բայց ես կը վստահեցնեմ որ եւ ոչ մէկը այնչափ կատարելագործուած կրնայ ըլլալ, որչափ նկարչի մը պատրաստածը: Վասն զի առանց կունտիսմ որ ըրթիւշի ոչ մէկ ակունտիսման արժէք կրնայ ունենալ:

Հասցէ
Ն. Սիսակեան Նկարիչ—Փոթորակ
Տօպրիչ
1—4

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարքարանէն Պուլկարիոյ այցելու հովիւ Պաղճեան վարդապետի գրուած է որ իր հրաժարականը ընդունուած ըլլալով երբ որ ուզէ կարող է վերագառնալ Պուլիս հանգիստ ընելու համար:

Վերջտպէս, որչափ շուտ երթայ Պաղճեան վարդապետը այնչափ աղէկ պիտի ըլլայ:

Վառնայի թաղական խորհրդին հաշուեցուցակին մէջ Պաղճեան վարդապետին համար 300 ֆրանքէ աւելի ծախք նշանակուած է:

Մեզի լաւ յայտնի է որ Պաղճեան վարնայի 3 ֆրանք օգուտ չէ բերած իր ներկայութեամբ. բայց այգը անոր համար 300 ֆրանք ծախսած է:

— Նուշիէն Մ. Ոսկեթել Թուրքի բէկեանց 2,000 ռուպլի արժողութեամբ հին դրամներ նուիրեր է էջմիածնի թանգարանին:

— Կաթողիկոսը Տփլիսէն (էջմիածին վերադարձեր է:

— Խումբ մը Պօլսեցի ազգայիններ պատրիարքին գրաւոր դիմում ըրեր են «Մասիս» յիսնամեակը տօնելու համար:

— Ազգային հիւանդանոցի նուազահանգէսին նախագահելու խոստումը տուած է քաղաքապետ Բըտվան փաշայ:

— Շատ մը գաւառներէ վիճակացոյցեր հասած են պատրիարքարան, որոնց մէջ ճշգրտած են դպրոցներու և եկեղեցիներու անունները, ուսուցիչներու և ուսանողներու թիւը, եկեղեցիներու և դպրոցներու սեփական կալուածքը, արժէքը ևն:

— Խառն ժողովոյ մէջ տրամադրութիւն կայ Պուլկարիոյ համար այցելու հովիւ զրկել Վահան վարդապետ Յակոբեանը:

— Կը լսենք որ հոչակաւոր զրպարտիչ Յակոբ Մայիսեանը շարունակ թուրք հիւպատոսարանի հոչակաւոր Չիլիկիբեանին հետ տեսակցութիւններ կունենայ: Քաղաքիս մէջ լուր տարածուած է որ Մալխասեան Պուլիս պիտի զրկուի: Չիլիկիբեանի խորհուրդով: Չիլիկիբեան գուցէ այդ առթիւ երբեք չքանչանք ստանայ իր արժանի տիրով մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Գերմանացի Մէլեր որ հրատարակած էր Սուրբախի եղբոր Ռէշիտի, անմիջական գահաժառանգի մահը խորհրդաւոր կերպով մը, արտաքուտ է Թուրքիայէն Սուրբախի հրամանով պաշտօնական հերքում մը հրատարակուած է Լէշիտին մահը տարածող լուրին դէմ:

— Նազիմ Եաքիբ փաշաները բոլորովին ներուած են և ազատ արձակուած, կը կարծուի որ Ֆուատ փաշան ալ ներման պիտի արժանանայ:

— Նովրի-Կարի մէջ զինուած առնավումները պաշարեր են կայմագամին բնակարանը բողբեղու համար քաղաքապետը Պուլիս կանչուելուն դէմ:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բեթէրսուրկի մէջ մօտ տաս հազար կոչեր տարածուած են, որով ժողովուրդին հրաւեր կը կարգացուի ապրիլ մէկին ցոյց ընել:

— Եարօսլավ և Թուէր քաղաքներու մէջ ալ գործաւորական խռովութիւններ տեղի ունեցեր են:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Քիչներ կը հեռագրէ որ զօրա վար Վալթէր Քիչներ որ պօէր զօրավար Տէլարէնը կը հալածէ, ընդհարում ունեցեր է: Բաւական տաք կռիւ տեղի ունեցեր է: Անգլիացիները Պօէրները ետ մը զեր են: Դէլարէյ այնչափ աշխատած է Պօէրները ոգեւորել կռիւը շարունակելու, չէ յաջողեր: Երկու կողմէն ալ բաւական թուով սպաննուածներ կան:

— Լօրտ Քիչներ ի հրամանով երկու Աւստրալիացի սպաներ հրացանի բռնուած են, իսկ երկուք ալ ծանր բանտարկութեան դատապարտուած: Ատ սպաները զոդութեան նպատակով սպաննուած են իրենց յանձնուած տաս վիրաւոր պօէրներ և գերմանացի միս

իօնէր մը, որ հեռուէն տեսած էր սպաներու այդ քստմեծ ռճրագործութիւնը:

— Հանգուցեալ Սէսիլ Ռօտէս իր հարստութեան մեծ մասը բարեգործական նպատակներու կը տակած է:

Զ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Մանչուրիոյ խնդիրը օտայժմ կտրգագրուած կը համարուի: անգլիական մամուլի մէկ մասը Ռուսիոյ կողմէ եղած այդ գիշտութիւնը Անգլո — Ճաբօնական դաշնակցութեան կը վերագրէ:

«Տէլի Բրօնիք» լրբերի ալ իր գոհունակութիւնը կը յայտնէ սակայն աւելցնելով թէ՛ Ռուսիա չինական նոր նոր սնկարգութիւններ պատճառ բռնելով կրնայ շարունակաբար իր զօրքերը հոն պահել:

Ի Տ Ա Լ Ի Ա

Քարբի մէջ գեանափոր շինութիւն մը գտեր են ուր Թիբերիոս կայսրը կը պահէր իր զօհերը, նախ քան յանոնք ծովը նետելը: Յոյ նկուղի պատերուն վրայ պատմական նշանաւոր արձանագրութիւններ կան, որոնցմէ կը հասկցուի թէ նոյն այդ գեանափոր շինուածքին մէջ բանտարկուած են եղած Բոմմոն հայսեր քոյրը և աղջիկը:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

— (Ճ) —

Փիլիպէի «Հայկական կարմիր խաչ» յանձնախումբը պոլկար կառավարութենէ վաւերացուած և տեղական քաղաքապետի հովանաւորութեան սակ վիճակահանութիւն մը սարքած է ինպատ հայ բանտարկեալներու և աքսորեալներու: հրապարակ հանուած են 1000 տամսակներ: պիտի շահին 100 թիւեր, զանազան իրեցէններ 369 ֆր. 40 սնթ. արժողութեամբ: յիշեալ տամսակներէն Վառնա մեզ ալ զրկուած է 100 օրինակ և իւրաքանչիւրը 1 ֆրանք արժողութեամբ կը ծախուին մեր քով:

Մուրաք Երանոսեան
Վառնա 27 մարտ

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Յառաջիկայ կիրակի դիշեր ժամը Յին ԹԱՏԵ՛՛ԱՍԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿՈՂՄԷ

Ի Ն Պ Ա Ս

Պ. ՕՆԵԻԿ ՍԷՄԷՐՃԵԱՆԻ պիտի ներկայացուի

ՍԱՍՆՈՅ ԱՊՍԱՍԻ-ՐՈՒԹԻՒՆԸ

անուն ողբերգութիւնը 5 արար և խիստ ծիծաղալար զուեշտ մը, գիներն դիւրամասշեղի: Չաւեշտ տաճկերէն լեզուաւ:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

—
Հայրապետ: Սարգսեան «Բրէտալ» կապ մեծ պողոտային վրայ:
Ամենաընտիր ապրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատէրով կօշիկներ, դները չափաւոր: Վստահ ենք թէ յաճախողները գոհ պիտի մնան ամեն կերպ:
Վառնա

L'EUROPEEN

—
Շարաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, բնկերական հարցերու, գրական եւ դեղարուեստական:
Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

—
Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ անհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով: Իւնիօն Տէ Գիլիսիան Արմ.
Լ'Եօրոք Վիլ քը Լ'Էֆօլ քը Երիւսի 2
Սուխա ժընէվ
Կարգադիր Յաննաճոյզով

Գ Ո Ւ Թ Ա Ն

—
Հանդիս արևելայ. նորագործական, գիտական եւ արուեստագիտական Հիմնադիր տնօրէն
Գարեգին Ը. Մեծասուրեան
Հրատարակուած է Ըրգ Թիւր.
Հանկան րովանդակութեամբ:
Տարեկան րաժնեգրին 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Ogeve

ԽՄԱՎԻՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐԺՈՒՄ

—
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրատարակիչ, մահազգ:

Քիչները յոյժ դիւրամասշեղի:

— Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:
ՍԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԹԻՒՆ

— Դրանք կանխիկ
ՄԻՄՕՆ ԵԱՀԱՊԵՏ Ե ԸՆԿ.
Ս. Ժիով. Գրիսօսքօս 5745
(Խտալիա) Վէնէտիկ
Դրանք. — Կը փութաւք յայտնելու անցիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ սեծաղիր լուսատիպ, առաջնակարգ եւ ամենատարբերական պատկեր մը, որ կը ներկայացնէ հոչակաւոր ազգային գործիչներու ժողով մը:
Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք:

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна